ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-1/2020
24.12.2015թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-1 պետական գնման պայմանագրի

ք. Երևան **« 24 » « 02 » 2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՄՈՒՐՋԾԻՆ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 24.12.2015թ. կնքված N**ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-1** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 48,000,000 (քառասունութ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

Չափաբաժին 1՝ ՀՀ Կոտայքի մարզի Հ-6, Աբովյան-Եղվարդ-Աշտարակ ա/ճ-ի Հրազդան գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքների 2020թ կատարման համար 15,840,000 (տասնհինգ միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Չափաբաժին 2՝ ՀՀ Արագածոտնի մարզի Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սանման ա/ճ-ի Քասախ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքների 2020թ կատարման համար 17,280,000 (տասնյոթ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Չափաբաժին 3՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի կամուրջի պահպանման աշխատանքների 2020թ կատարման համար 14,880,000 (տասնչորս միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.5 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:

7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և	«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ
ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 6-րդ փ.40/1
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՀ 115004674509
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 01201526
ՀՀ 900011012136	տնօրեն
գլխավոր քարտուղարին փոխարինող	Ռ. Խաչատրյան
Հ. Բատիկյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

24. 02. 2020թ.

Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-1/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	2020թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Կոտայքի մարզի Հ-6, Աբովյան-Եղվարդ-Աշտարակ ա/ճ-ի Հրազդան գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքներ	3,960,000	3,960,000	3,960,000	3,960,000	**15,840,000**
2	ՀՀ Արագածոտնի մարզի Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սանման ա/ճ-ի Քասախ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքներ	4,320,000	4,320,000	4,320,000	4,320,000	**17,280,000**
3	ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի կամուրջի պահպանման աշխատանքներ	3,720,000	3,720,000	3,720,000	3,720,000	**14,880,000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 6-րդ փ.40/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004674509
ՀՎՀՀ 01201526
տնօրեն
Ռ. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ.

24.02.2020թ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	ՀՀ Կոտայքի մարզի Հ-6, Աբովյան-Եղվարդ-Աշտարակ ա/ճ-ի Հրազդան գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքներ	-	2,640,000	2,640,000	6,600,000	6,600,000	6,600,000	10,560,000	10,560,000	10,560,000	15,840,000	15,840,000	15,840,000	**15,840,000**
2	ՀՀ Արագածոտնի մարզի Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սանման ա/ճ-ի Քասախ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքներ	-	2,880,000	2,880,000	7,200,000	7,200,000	7,200,000	11,520,000	11,520,000	11,520,000	17,280,000	17,280,000	17,280,000	**17,280,000**
3	ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի կամուրջի պահպանման աշխատանքներ	-	2,480,000	2,480,000	6,200,000	6,200,000	6,200,000	9,920,000	9,920,000	9,920,000	14,880,000	14,880,000	14,880,000	**14,880,000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 6-րդ փ.40/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004674509
ՀՎՀՀ 01201526
տնօրեն
Ռ. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ.